

Հոս չենք ուզեր երկարել, քանի որ հոն հին ազգաբնակչութիւնը շատ փոխուած է մանաւանդ 1878 էն ետքը Ռուսաց ձեռք մնացած բաժնին մէջ: Բնիկներուն մաս մը գաղթած է, եկած են նորեր, եւ այս շարժումը կը շարունակուի ցայսօր: Անոր համար Տայոց ռուսական մասը նկատի չենք առնուր նաեւ յաջորդ դիտողութեանց մէջ:

Տայոց միւս մասերուն, ուստի վերը նկարագրուած Կիսկիմ եւ Թորթում գաւառներուն արդի վիճակը հետեւեալն է: Եւախ այս ամրոցը գծին վրայ նաեւ այսօր՝ ինչպէս տեսանք անցողակի, հայ-թիսթանեայ բաւական բնակչութիւն կայ, բազմաթիւ անխառն գիւղերով ալ: Հայ գիւղերն անհամեմատ բարձր են թէ՛ քաղաքակրթութեամբ եւ թէ՛ տնտեսապէս, թէեւ յաճախ նուազ բարեբեր հողեր ունենան: Կան դարձեալ՝ թէեւ հոս շատ փոքրաթիւ՝ նորեկ մահմետականներ. եւ ասոնք են՝ ինչպէս ամէն տեղ՝ մահմետական մոլեռանդ տարրը, որ սակայն միշտ պատրաստ է գաղթելու, երբ պարագաները փոխուին: Մահմետականաց ճնշող մեծամասնութիւնը հայ-մահմետական է, որուն մէջ իբր մոլեռանդ տարր կայ — բացի սակաւաթիւ պաշ-